# ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

UNDP

## Քաղաքաշինական եւ տարածական պլանավորման ոլորտում ՀՀ համայնքներին տեխնիկական խորհրդատվության եւ օժանդակության տրամադրման մասնագիտական աջակցության

3. Դասախոսություն 3
ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշում)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 1998 թվականի N 660
քաղ. Երևան

## ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 3. Դասախոսություն 3

**ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի** 28-ի **N** 660 **որոշում**)

Իրազեկումն իրականացվում է՝

ա) զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով (տեղական և հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր).
բ) ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով տեղական ինքնակառավարման մարմինների ինտերնետային կայքերում տեղադրմամբ.
գ) հասարակական քննարկումներով:

Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքները ևս ենթակա են հասարակության իրազեկման:



**3. Դասախոսություն 3 ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 660 որոշում)**

Համայնքների ղեկավարները (բացառությամբ սույն կարգի 3.2-րդ կետով սահմանված դեպքերի) իրենց համաձայնեցմանը ներկայացված քաղաքաշինական ծրագրերը և նախագծերն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում պարտավոր են դրանց մասին իրազեկել հասարակայնությանը` նշելով վերոհիշյալ փաստաթղթերին ծանոթանալու պայմանները` հրապարակման, ցուցադրման և հասարակական քննարկման տեղն ու ժամանակը:

**Պարտավորության չկատարումն առաջացնում է վարչական պատասխանատվություն` օրենքով սահմանված կարգով**:

Քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի հրապարակման և ցուցադրման ժամկետը սահմանվում է 15 **օր**:

## 3. Դասախոսություն 3

**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի** 2017 **թվականի սեպտեմբերի** 11-**ի N 128-Ն հրաման**)

**Հարց** 1. Նշել համալիր փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի կազմը:

**Հարց** 2. Նշել «Նախագիծ» փուլի նախագծային փաստաթղթերի բաժինների կազմը և բովանդակությունը

**Հարց** 3. Որ դեպքում է ներկայացվում շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված մասնագիտական եզրակացությունը:



Հարց 1. համալիր փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի կազմը:

եզրակացությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ի N 128-Ն**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 273-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**



Հարց 1. համալիր փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի կազմը:

**Աղյուսակ N 9**
**ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթի պատճենը, սեփականատիրոջ (կամ օգտագործողի) անձնագիր (պատճենը)
2. Նախագծող կազմակերպության լիցենզիա (պատճենը)
3. Ճարտարապետահատակագծային առաջադրանք
4. Հողամասի տեղագրական հանույթ
5. Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվություն (կամ շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացություն)
6. Իրավիճակային հատակագիծը գոյություն ունեցող ստորգետնյա հաղորդակցուղիների և ցանցերի ուղեգծերով

## 5. Դասախոսություն 5
## ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրաման)

7. Գծերի տեղափոխման անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան համաձայնեցումներ

8. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ սահմանված կարգով համապատասխան լիազոր մարմնի համաձայնություն (կամ եզրակացություն)

9. Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների և սեյսմամիկրոշրջանացման հաշվետվություն (սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության օբյեկտների համար) կամ սեյսմիկ պարամետրերի տվյալներ (սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակության օբյեկտների համար)

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 4-ի N 1530-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան կատարված ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության եզրակացությունը (*)

11. Համալիր փորձաքննության եզրակացություն

## 3. Դասախոսություն 3
## ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրաման)

12. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացություն

13. Կախված օբյեկտի բնույթից՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, արտակարգ իրավիճակների (հրդեհներ, պայթյուններ, փլուզումներ և այլն) կանխարգելման, կապի համակարգերի, տրանսպորտային, էներգետիկ ու ինժեներական այլ ենթակառուցվածքների, արդյունաբերական անվտանգության, ընդերքի արդյունավետ օգտագործման, տեխնոլոգիական, սանիտարական պահանջների ապահովման վերաբերյալ համապատասխան ոլորտին առնչվող փորձագիտական կամ մասնագիտական եզրակացություն կամ համաձայնեցում



# Հարց 2. Նշել «Նախագիծ» փուլի նախագծային փաստաթղթերի բաժինների կազմը և բովանդակությունը

## Աղյուսակ N 3

## «Նախագիծ» փուլի նախագծային փաստաթղթերի բաժնի ; ենթաբաժինների անվանումը

1. Ընդհանուր բացատրագիր
2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)
3. Ճարտարապետաշինարարական մաս
   - 3.1 Ճարտարապետական լուծումներ
   - 3.2. Կոնստրուկտիվ լուծումներ
4. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
5. Տեխնոլոգիական լուծումներ, եթե դրանք փոխկապակցված են կոնստրուկտիվ համակարգի հետ
6. Շինարարության կազմակերպման նախագիծ
7. Քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագիծ
8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ
9. Հակահրդեհային անվտանգության միջոցառումներ
10. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ



**5. Պատասխանություն 5**

**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրաման)**

11.Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ

12.Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝

13. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝

. Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ

. Տեռորիստական ակտերի դեմ պայքարի միջոցառումներ

. Վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ

. Հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության միջոցառումներ

. Այլ միջոցառումներ որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ



**Հարց** 3. շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված մասնագիտական եզրակացությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 մարտի 2015 թվականի N 596-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

73. Նախագծային կապալի պայմանագրին կցվում են՝

3) վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 274 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը.



# 3.3 Դասախոսություն 3
# ՀՀ վարչության 2024 թվականի նոյեմբերի 1-ի N 978-Լ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն որոշումներ

## Քաղաքաշինական փաստաթղթերի պարզ և պետական համալիր փորձաքննություն

**Պետական համալիր փորձաքննության համար դիմումի և նախագծային փաստաթղթերի ներկայացման օրինակելի ձև**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

____________________________________
(տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը)

____________________________________
Պետական համալիր փորձագիտական եզրակացություն հայցող պատվիրատուի անուն, ազգանուն, հայրանունը /Բնակության կամ գործունեության վայրի հասցեն/

Հարգելի …………………………….

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգի և ՀՀ վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 1-ի N978-Լ որոշման համաձայն՝ պետական համալիր փորձաքննության նպատակով, Ձեզ եմ ներկայացնում ______________________________ (օբյեկտի հասցեն, անվանումը) նախագծային փաստաթղթերը:

Կից ներկայացնում եմ՝

- նախագծային փաստաթղթերը՝ 1 օրինակ (բոլոր կնիքներով, էլեկտրոնային՝ PDF ֆորմատով) ուղարկվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական էլ-փոստին՝ info@minurban.am:
- լիազորագիր (եթե նախագծային փաստաթղթերը ներկայացնում է պետական համալիր փորձաքննություն հայցող պատվիրատուի լիազորված անձը):

անուն, ազգանուն ստորագրություն (կնիք՝ առկայության դեպքում)

ամսաթիվ

Պետական համալիր փորձաքննության նպատակով ներկայացված նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը վերաբերվող պարտադիր պահանջները.

IV և V կատեգորիաների բնակելի, հասարակական, արտադրական շենքերի, շինությունների նախագծային փաստաթղթերի առաջին՝ «Նախագիծ» փուլում անհրաժեշտ է ներառել հետևյալ բաժինները:

| | **«Նախագիծ» փուլի նախագծային փաստաթղթերի բաժնի և ենթաբաժինների անվանումը** | **Բաժնի կոդը** |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր բացատրագիր | ԸԲ |
| 2 | Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) | ՀԿՈՒ |
| 3 | Ճարտարապետաշինարարական մաս | ՃՇՄ |
| 3.1 | Ճարտարապետական լուծումներ | ՃԼ |
| 3.2 | Կոնստրուկտիվ լուծումներ | ԿԼ |
| 4 | Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | ԻՑՍ |
| 5 | Տեխնոլոգիական լուծումներ, եթե դրանք փոխկապակցված են կոնստրուկտիվ համակարգի հետ | ՏԼ |
| 6 | Շինարարության կազմակերպման նախագիծ | ՇԿՆ |
| 7 | Քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագիծ | ՔԱՆ |
| 8 | Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ | ՇՄՊ |
| 9 | Հակահրդեհային անվտանգության միջոցառումներ | ՀԱ |
| 10 | Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ | ՀՄԱ |
| 11 | Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ | ԷԷ |
| 12 | Շինարարական աշխատանքների ծավալաթերթ և նախահաշիվ | Ն |
| 13 | Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ | |
| | Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ | ՔՊ |
| | Ահաբեկչական ակտերի դեմ պայքարի միջոցառումներ | ՏԱՊ |
| | Վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ | ՎՕԱ |
| | Հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության միջոցառումներ | ՀԿԱ |
| | Այլ միջոցառումներ որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ | ԸԲ |

Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի երկրորդ՝ **«Աշխատանքային փաստաթղթեր» փուլում** անհրաժեշտ է ներառել հետևյալ բաժինները:

| **«Աշխատանքային փաստաթղթեր» փուլի նախագծային փաստաթղթերի հիմնական բաժինների անվանումը** | **Մակնիշը** | **Ծանոթություն** |
|---|---|---|
| Գլխավոր հատակագիծ և տրանսպորտային կառույցներ | ԳՏ | Գլխավոր հատակագծի և տրանսպորտային կառույցների աշխատանքային գծագրերի միավորման դեպքում |
| Գլխավոր հատակագիծ | ԳՀ | |
| Տրանսպորտային կառույցներ | ՏԿ | |
| Ավտոմոբիլային ճանապարհներ | ԱՃ | |
| Երկաթուղային գծեր | ԵԳ | |
| Ճարտարապետական մաս | Ճ | |
| Ճարտարապետաշինարարական մաս | ՃՇ | Ճարտարապետական և կոնստրուկտիվլուծումների աշխատանքային գծագրերիմիավորման դեպքում |
| Երկաթբետոնե կոնստրուկցիաներ | ԵԿ | |
| Մետաղական կոնստրուկցիաներ | ՄԿ | |
| Մետաղական կոնստրուկցիաների մանրամասներ | ՄԿՄ | |
| Փայտե կոնստրուկցիաներ | ՓԿ | |
| Ուժային էլեկտրական սարքավորումներ | ԷՈՒ | |
| Էլեկտրալուսավորություն | ԷԼ | |
| Արտաքին էլ լուսավորություն | ԱԼ | |
| Էլեկտրամատակարարում | ԷՄ | |
| Ջրակատակարարում և կոյուղի | ՋԿ | |
| Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր | ՋԿՑ | |
| Ջրամատակարարման արտաքին ցանցեր | ՋԱՑ | Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր բաժինը կարող էմշակվել երկու առանձին բաժիններով |
| Կոյուղու արտաքին ցանցեր | ԿԱՑ | |
| Օդափոխություն, ջեռուցում և օդի լավորակում | ՋՕ | |
| Օդամատակարարում | ՕՄ | |
| Փոշեհեռացում | ՓՀ | |
| Սառնամատակարարում | ՍՄ | |
| Ջերմային ցանցեր | ՋՑ | |
| Կաթսայատների ջերմամեխանիկա | ՋՄ | |
| Ռադիոկապ, հեռուստատեսություն, ինտերնետ կապ | Կ | |
| Ավտոմատիկա | Ա | |
| Գազամատակարարում (ներքին սարքավորումներ) | ԳՄ | |
| Գազամատակարարման արտաքին ցանցեր | ԳՑ | |
| Տեխնոլոգիական մաս | Տ | |
| Տեխնոլոգիական կոմունիկացիաներ | ՏԿ | Տեխնոլոգիական բոլորկոմունիկացիաների աշխատանքայինգծագրերի միավորման դեպքում |
| Հրդեհաշիջում | ՀՇ | |
| Հրդեհային ազդանշան | ՀԱ | |

## Քաղաքաշինական փաստաթղթերի պետական համալիր փորձաքննություն

QR ծածկ ագիր

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**
**(այսուհետ՝ հանձնաժողով)**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N ________________
*հերթական համարը*

*---------------------- հասցեում --------կառուցապատման աշխատանքային նախագիծը ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության ենթարկելու վերաբերյալ*

Հանձնաժողովը ---------------------հասցեում ---- կառուցապատման աշխատանքային նախագծի ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննությանը տալիս է դրական եզրակացություն:

Կառուցապատման գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Օբյեկտի տվյալները և ցուցանիշները.
1) օբյեկտի անվանումը ----------
2) ճարտարապետահատակագծային առաջադրանք N --------- տրված --/--/--թ.
3) օբյեկտի հարկայնությունը----------
4) նախագծային կազմակերպության անվանումը (արտոնագրի համարը)----------
5) կառուցապատողի անվանումը ----------

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | ստորագրություն | անուն, ազգանուն |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | ստորագրություն | անուն, ազգանուն |

Երևան, «____» «_______________» 20 թ.

### Կ Ա Զ Մ

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն
- Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն
- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն (անհրաժեշտության դեպքում)
- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆ